



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հիփոշյակ Բ.

Երկրագր

ԼԿՈ

12

1999. 1


Մ. ԱՐԵՂԵԱՆ

# ՆՄՈՒՋՆԵՐ



ՇՈՒՇԻ

Տպարան Հայոց Հոգևոր Տեսչության



1888

Дозволено цензурою 6 августа 1888 г.

Г. Тифлисъ.

Типог. Шушин. Армян. Духовн. Ведомства.

7 12-60

28. 17

Հ Ո Վ Ի Կ

Փչիր մեղմով, զովիկ քամի,  
Կանաչագոտ մախմուռ սարից,  
Փչիր, անցիր բարձր ժամի  
Հովանաւոր խաչիկ-ծայրից:

Կակուղ թևովդ կամացուկ  
ձօձիր կանաչ ցորենին արտ,  
Որ ոտքիս տակ, զեռ նորեղուկ,  
Ծածան-արձակ խաղայ հանդարտ:

Դու՛ որ երկնի սահմանի մէջ  
Լայնածաւալ ընթացք ունես,  
Ազատ-արձակ միշտ ելևէջ  
Սիրուն լեռան վրայ կ'անես,—

Դու զովացուր և իմ ճակատ,  
Դու բեր և ինձ, հովիկ, անդորր,—

Ա՛խ, սիրա—հոգիս, քանց վառ արկատ,  
Բռնկել է տենչատոջոր:

Ներադիս վառած բոց-կրակէն  
Կրճքիս պատեան սրտիս համար  
Նեղ է սաստիկ,—նրա տակէն  
Սիրտս թռչում է լայն կամար:

Գու՛ վափկաթե զովելի զեփիւռ,  
Առ ինձ, ինդրեմ, թեւիդ վրան,  
Տար ինձ սարերը ծաղկասփիւռ,  
Կանաչ մարմանդ, հովուի վրան,

Ուր ծաղկում է կեանքը խաղաղ,  
Նրջանկութեան ոսկի ժամեր  
Փպտում, անց են կենում ուրախ,—  
Տար ինձ, զեփիւռ, այն սուրբ վայրեր. . .

1883 Արկաղու Ս. Խայ:

Ս. ԼՈՒՍՍԱԻՈՐԻԶ ԽՈՐ-ՎԻՐԱՊԻՆ

[Ժողովրդ. աւանդ.]



Ինչ՞ու՛, ինչ՞ու՛ են ձայն հոգիւմ  
Գժոխքի խոր անդունդները  
Ինչ՞ու՛, ինչ՞ու՛ են դռնէս մտքիս  
Չար-Սատանի գահոյքները:

Սանդարամետը մեղմ ձայնէն  
Ինչ՞ու՛ սարսում է, սարսափում,  
Նւ աւելի չարերն ամեն  
Մթին Սանդարքը խոր թափում:

Իսկ մեր աշխարհն անցնում իրար,  
Աղմուկն իշխում է ամենուր,  
Ռամիկ, զինուոր ու նախարար,  
Դարձեալ ամենքն առնում են սուր:

Մի՛թէ պարսիկն է զէնք առած  
Սրագ վազում մեր աշխարհը,  
Որ Տրդատայ հզօր ձեռաց  
Յափշտակէ մեր հայ զահր:

Ո՞ւր է Տրդատն ահեղաղոր,  
Ինչո՞ւ չէ նա մի ականուժ,  
Հայոց-Մեծաց սէգ թագաւոր,  
Եւ պարսից զօրքն անհեա անուժ:

Բ.

Սրտաշատու Խոր-Վիրապին—  
Լիցում է տասն և հինգ տարին—  
Կենդանի է դեռ սուրբ Գրիգոր,  
Մեր բարեխօսը զօրաւոր:

Սուրբ Հաւատքը Լուսաւորչին  
Օգնական է մէջ վիրապին—  
Մեր սուրբ Հաւատքն էլ յաւիտեան  
Բողոր Հայոցս է պահապան:—

Լուսաւորիչ բազկատարած  
Փակուած է մէջ Խոր-Վիրապին,  
Ու չորս բոլորքն օձերն առած,  
Շուրջ են եկիլ Լուսաւորչին:

Սողուն-գեռունքը միասին  
Նստոտել են լռիկ-մնջիկ,

Լուսաւորչի լոյս-երեսին  
Հոգեզմայլած անում մտիկ:

Լոյս-երեսէն ճառագ ցորում,—  
Մութ վերապն է լուսանման,—  
Լուսաւորիչ բերան բանում,  
Ասում է իւր աղօթքն անձայն:

Նրա մրմունջ սուրբ աղօթքէն  
Երկինք-գետինքը շարժուեցին,  
Յանկարծ անդունդքը բացուեցին:

Նրա մրմունջ սուրբ աղօթքէն  
Թնդաց դահլիճը Սատանի,  
Ամուր դահլիճը Ղեկիւքի:

Նրա մրմունջ սուրբ աղօթքէն  
Տրդատ թախտից գլոր եկաւ,  
Արքան թախտից դետին ընկաւ:

Նրա մրմունջ սուրբ աղօթքէն  
Տրդատ վազեց դէպ Մեծամօր,  
Վազեց, մտաւ շամբերը խոր:

Նրա մրմունջ սուրբ աղօթքէն  
Խորխոր պատեց Սէգ-Տրդատին,  
Խոզի խորխոր թագաւորին:

Գ.

Լուսաւորիչ բազկատարած  
Մէջ վերապին, Խոր-Վիրապին,  
Մէջ գարշաթոյն զեռուններին  
Աղօթք անում գէպի Աստուած:

Նրա մրմունջ սուրբ աղօթքէն  
Թնդաց և խորքը վերապին,  
Սողուն-զեռունքը քաշուեցին,  
Իջաւ Տիրոջ լոյսն երկնքէն:

Եւ պահասան հրեշտակն առաւ  
Լուսաւորչի սուրբ աղօթքը,  
Տիրոջ առաջ երկինք տարաւ,  
Եւ Քրիստոսի ձգեց ոտքը:

Գ.

Լուսաւորիչ բազկատարած  
Մէջ վերապին, Խոր-Վիրապին,  
Նրկնի պայծառ զուններն են բաց  
Վեր վերապին, Խոր-Վիրապին:

Կանաչ-կարմիր ամպէ կանգնած,  
Եւ հրեղէն կամար կապած,  
Հրեշտակները դաս-դաս շարուած,  
Շուրջ կամարին են բոլորած:

Լուսաւորիչ մէջ վերապին,—  
Իւր Տէր Քրիստոս վեր վերապին,  
Լուսաւորիչ աղօթք անում,—  
Քրիստոս վերից աղօթքն առնում:

Ե.

Լուսաւորիչ մէջ վերապին,  
Իւր Տէր Քրիստոս վեր վերապին,—  
Լուսաւորիչ աղօթք անում,  
Իւր Տէր Քրիստոս հրաման հանում:

Եւ զուարթուն հրեշտակներ  
Կարգ են շարուում երկնից գեօինք,  
Լուսաւորչին առնում թևեր,  
Ու վերապից ելնում երկինք:

Լուսաւորիչ հրեղէն ամպին,—  
Նրա լոյս-աչքը գեանին է:

Լուսաւորիչ հրեղէն ամպին,  
Նրա լոյս-աչքը Հային է:

Ամպերի մէջ աթոռ մի կան,  
Ոսկի աթոռ մի կան գրած,  
Քրիստոս վրան փառքով բազմած,  
Ձեռքին ճերմակ թուղթ ու մատեան:

Լուսաւորիչ է առաջին  
Տէր Քրիստոսի առջև անկման.  
Քրիստոս տալիս Լուսաւորչին  
Աղամային մահու մատեան:

Լուսաւորիչ կանգնում յուսով,  
Նւ Քրիստոսից մատեանն առնում,  
Պատռտում է իւր սուրբ ձեռքով,  
Նւ մէջ հրեղէն բոցին վառում:

Նւ Գաբրէլից Լուսաւորիչ  
Առնում է մի ոսկի գրիչ  
Նւ Քրիստոսի սուրբ ձեռքիցն էլ  
Մաքուր, ճերմակ թղթիկն առել:

Առել գրում մեծ ու պսակին,  
Նա մեր բոլոր հայոց ազգին  
Ոսկի գրով գրում անքակ  
Մէջ այն մաքուր թղթին ճերմակ...

2


Լուսաւորիչ մէջ վերապին,  
Լուսաւորիչ մէջ աղօթքին.

Նրա հզօր սուրբ աղօթքէն  
Նրկինք-գեանք կը զարհուրեն.

Նրա հզօր սուրբ աղօթքէն  
Չարին դահեր կը զըրուեն.

Նրա հզօր սուրբ աղօթքէն  
Հայերը հայ-քրիստոնեայ են

1883. Ս. Էջմ.




\* \* \*

Տրտմամ է հողիդ... Առ, երգիչ, քո ձեռք,  
 Եւ զարկ թնդազին ոսկեղար քնար,  
 Ճնշում են թէ քեզ աշխարհի գործերը,  
 Եւ ոչ մի սիրտիանք չունիս քեզ համար,

Գու երկնի շողուն ծիածանի տակ  
 Աչքերդ յառած, շրացիր փառքով:  
 Գու հոն տես կեանքի քո սուրբ նպատակ,  
 Եւ մխիթարանք կը գտնես հողում:

Անմահ հանդերձեալն է քեզ առաջնորդ,  
 Ու ժողին հնչեցրու սրբազան գործիդ,  
 Եւ հեռու թողած կրքերի ոլորտ,  
 Վերև ամբարձիր, վառելով հողիդ...

1885



ԼԵՌՆԱՅԻՆ ԿԵՆՅԱՂ

[Հէյնէից]

Ծեր հանքահանը կենում է  
 Սարի վրայ խրճթում,  
 Հոն շըշում է կանաչ մայրին,  
 Լուսնակն ոսկի փայլկոում:

Խրճթի մէջ մի բազմոց կայ,  
 Ողջ քանդակած դեղեցիկ.  
 Երջանիկ է վրան նստողն,—  
 Ու ես եմ այն երջանիկ:

Բազկով ծնկիս մանկիկն յենած,  
 Մօտիս նստած է հանդարտ,  
 Աչկունքն ինչպէս կապոյտ աստղեր,  
 Շրթունքն ասես կարմիր վարդ:

Եւ կապուտակ սիրուն աչերն  
 Ինձ են փայլքով ակնում:  
 Ու վախէվախ շուշան մասներ  
 Նա վարդ բերնին է տանում:

Չէ, չէ, մեզ չէ տեսնում ոչ որ.  
Մայրդ ճախրակ է մանուկ,  
Հայրիկդ էլ խօ վինը ձեռքին  
Հին երգն ածում ու երգում:

Եւ մանկիկը շշնջում է  
Ցածր ձայնով, խիստ կամաց,  
Եւ ինձ արդէն վստահութեամբ  
Նա շատ գաղտնիք է յայտնած:

«Ե՛հ, հօրաքոյրս որ մեռաւ,  
Էլ մենք քաղաք չհնք գնում:  
Բայց ինչ սիրուն, լաւ է այնտեղ,  
Մարդու սիրտ բաց է լինում:

«Այստեղ տարին-բոլոր սառած,  
Կռան գլխին ենք մենակ.  
Հապա ձմեռն,— ս՛հ, ձմեռն  
Ամբողջ թաղում ենք ձեան տակ:

«Սա էլ երկչոտ մի աղջիկ եմ,  
Վախենում եմ քաջքերը...  
Չէ՞ որ նրանք այս ու այն կողմ  
Նառ են շրջում գիշերը»:

Յանկարծ լռում է փոքրիկը,  
Հէնց իւր խօսքից վախ ելած,  
Եւ պինդ ծածկում թաթիկներով  
Աչերն ու դէմքն այլայլած:

Գուրսն եղևինը շըշում է,  
Ներսում ճախրակը ճրձում,  
Վինը հնչում է մէջէմէջ,  
Իսկ հօր հին երգը մրմռում:

«Ձար քաջքերից, սիրուն տղայ,  
«Մի՛ վախենար դու, մի՛ երբէք.  
Հրեշտակները, սիրուն տղայ,  
«Հսկում են քեզ գիշեր-ցերեկ»:—

Լուսնակն հեզիկ գաղում է դուրս  
Կանաչ մայրու ետևում:  
Եւ սենեակի մէջ լապտերը  
Վառւում, աղօտ պլպլում:

Իսկ կապուտակ աչերն աստղիկ  
Շողում պայծառ իմ դիմաց,  
Երթունքին վարդը վառ անում,  
Ն աղջիկն ասում է կամաց:

«Մեզնից լաւեր տնականներն \*) են  
Գալիս մեր հացը տանում:  
Երեկոյեան արկղը լեքն էր,  
Իսկ այսօր բան չէր մնում:

«Մեզնից լաւերը մեր կաթի  
Սերն ուտում են, չին ծածկում  
Ամանն էլէ, մնացած կաթն էլ  
Գալիս կատուն է լսիում:

«Մեր կատուն էլ մի կախարդ է,  
Անձրև ու մութ զիշերը  
Նա գնում է սարի վրայ  
Քանդուած բլրի մօտերը:

«Այնտեղ առաջ կար մի սիրուն  
Ու մարդով լեքը դղեակ.  
Մէջն ասպետ, կին խաղում էին  
Միշտ ջահերի լուսու տակ:

«Մէկ օր մարդիկն ու դղեակը  
Դիւթեց մի չար կախարդ կին,—

\*) Տնական—տան ոգի (домовой).

Դղեակն խիղջն քար-քանդ եղաւ,  
Մարդկանց թաղեց իւր ասիկն:

«Քայց հօրաքոյրս ասում էր.  
Մի խօսք կայ, թէ որ ոքմին  
Սյգ խօսքն ասէ հէնց ճիշդ տեղում,  
Գիշերը հէնց ճիշդ ժամին,

«Աւերակներն էլի կ'երեն,  
Սիրուն դղեակ կը գառնան,  
Ասպետ, տիկին միջին դարձեալ  
Ուրախ-ուրախ պար կը գան:

«Եւ ո՛վ որ այս թիւսմն ասէ,  
Ամենք նրան կը յսեն.  
Փող ու թմբուկ ուրախ երգով  
Հա՛ նրա գովքը կ'ասեն» :—

Այսպէս են վարդ շրթունքներից  
Հեքթրները դուրս գալի.  
Եւ աղջկայ աչերն-աստղիկ  
Շողշողում էլ աւելի:

Եւ մասների անուններն է  
Մէկ մէկ տալիս նա, հերը

Հիւսում ձեռքիս,— խնդում, ժպտում,  
Ու լուռ կենում վերջերս:

Եւ ամեն ինչ խաղաղ տան մէջ  
Այնպէս է ինձ մտերիմ—  
Սեղան, աթոռ, կարճես, առաջ  
Մէկ էլ տեսած ես լինիմ:

Ժամացոյցը ճկճկում է  
Պատի վրայ, և հնչում  
Վինը մէկ մէկ անոյշ— իսկ ես  
Ոնց որ լինիմ անընդամ:

1885



ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ԴԵՒ

[Արմենապի «ԳԼ»-ից]

Կապոյտ, արձակ եթերով  
Մի սուրբ հրեշտակ էր սլանում  
Ոսկեփետուր թևերով,  
Եւ, զիրկն առած, երկրէս տանում  
Մեղաւորի մի հոգի:  
Նա յուսոյ քաղցր խօսքերով  
Հոգու կասկածն էր վանում,  
Եւ չարչարանքն ու մեղքի  
Հեռքերը ջերմ արցունքներով  
Նրա գէմքից լուանում:

Գրտխաթի ձայներն արդէն հեռուանց  
Գալիս հասնում էին նրանց,  
Երբ յանկարծ խոր անգնդից,  
Մէջ կտրելով ազատ ուղին,  
Գժոխային չար-ժանա ոգին  
Վեր խոյացաւ սպառնալից—  
Հօր էր նա փոթորիկի պէս,  
Փայլուն նման կայծակին,

Եւ անմտութեամբ, ժպիրհ ու վէս,  
Ասաց. «Իմն է այդ հոգին»:

Հրեշտակն աչքը խիտս կերպով  
Փորձչի վրայ խոժոռեց,  
Եւ թեքն ուրախ թափ տալով  
Երկնի ցոյքի մէջ սուղուեց,—  
Նա տարաւ հեան արդար հոգին:  
Իսկ երկրայող դեր՝ յաղթուած,  
Անմտութեան իւր ցնորքին  
Նշաւակի անէծք կարդաց,  
Եւ, վերստին ամբարհաւած,  
Տիեզերքում մենակ մնաց,—  
Անյոյս, անսէր, ինչպէս առաջ:

1885



Բարեկամ, նայում ես . . . . ին,  
Հայեացքդ տխուր սեւեռած նրան,  
Ուղում ես տեանե՞լ հեռու ապագան,—  
Խաւար է նա քանց մնայլ գիշերին.  
Ինչ անտակ վհի յատակն անթափանց,  
Ինչպէս ովկիանի անդունդը մնայլ,  
Ուր չէ հասցնում արեգակն իւր փայլ  
Անմատոյց է նա աստուոր մարդկանց:

Ներկան քեզ համար չունի մխիթար,  
Եւ տրամած, իսկոյն անցեալն՝ վրան  
Աչքերդ ակամայ առնում են դադար,  
Անցած օրն էլ չի՛ դառնալ յաւիտեան:

Նա այն ժամանակ, գեռ մանուկ անմեղ,  
Ծաղկում էր այգում քան վարդ մի շքեղ.  
Եւ չտեսնելով փչացած աշխարհ,  
Սիրան երախտադէտ բաբախում էր ջերմ  
Հայրական անկեղծ խնամքի համար,  
Եւ տածում իւր մէջ սրբութեան լոկսերմ:  
Երջանիկ էր նա շատ, իմ բարեկամ,  
Երջանիկ սրտի սիրովն ազգային,

Թէպէտև մերթ թիւր կրթութիւնն ան-  
գամ՝  
ձնշում էր մաքի մաքուր աշխարհին:—

Ախ, անց կացան շուտ այն օրերն անոյշ,  
Կնչպէս վաղանցիկ ժամերն երեկուան,  
Անցաւ և մեծ հօր հովանին քնքոս շ, —  
Անխնամ մնաց նորահաս պարման:  
Լուսաւորութեան փշեց սուտ քամին,  
Եւ այն ջերմհողին շատ շուտով սատեց.  
Լռեց սրբութիւն, մոռցան երաստին,  
Եւ կեղծ ազատը կարգը չպահեց:

Ախ, կարգ հրաշալի, միակ կասափար  
Եւ աէր ընդհանուր դու տիեզերքին.  
Հետտեց քեզ մի դամհրեշտակը նախկին,  
Եւ պայծառ երկնուց խորխափեց խա-  
ւար.  
Չանսանքեզ մի դամ, միայն մի վայրկեան,  
Եւ մոլորակներն, արեգն, և աշխարհ,  
Եւ ամբողջ երկնի աստղային խորան,  
Շուտ կր թօթափեն ամենքը խոնարհ...

1885 դեկտ. 25.

ՄՕՐ ՊԱՏՄԱԾԸ.

Ուր որ լինիս, ինչտեղ գնաս,  
Լրյս—Հաւատիս հաստատ մնաս:

Ժողովրդ. երգ.

Գուրար ցուրտ է, բուքը խաղում,  
Չանձրայի է տանը միայն,  
Մարդուս սիրտը չէ խաղաղում. . .  
Չմնան զիշերն էլ խիստ երկայն:—

«Ձէ՛, չէ՛, քներս չի տանում,  
Մեզ մի հեքաթ ասա, մայրիկ»:  
—Սնպէտք հեքաթն ի՛նչ էք անում,  
Ուրիշ մի բան պատմեմ, արիք:—

Շատ հեքաթներ ասել եմ ձեզ—  
Մեղայ քեզ Տէր, ամենայն ժամ,  
Իսկի միտքս բերճում եմ Քեզ—  
Լաւ լսեցէք դուք այս անգամ:

Տեսէ՛լ էք, չէ՞, մեր սուրբ վանքը,  
Ո՛նց շինուած է բարձր—աննման,  
Ձեր պապերն են իրենց կեանքը,  
Որդիք, դրե՛լ նրա վրան:

Ձեր պապերը, լուսահողի  
 Հայրս ասում էր, նրանք ուսով  
 Կրել են կիր-քարը վանքի,  
 Ու բարձրացրել վանքն այգյակիսով:

Ես մեղաւոր, լուսահողին  
 Շատ սուրբ մարդ էր, ասում էր նա՝  
 Ամեն տարի կէս զիշերին  
 Լոյս է իջնում վանքի վրայ:

Լուսահողին լոյսը տեսնում—  
 Երնե՛կ նրա տրդար աչքին—  
 Ու մեզ նստում զովքն էր ասում  
 Սուրբ Վարդանայ նահատակին:

Երեք զիշեր կ'ասեր, կ'ասեր,  
 Ձեր վերջանալ պատմութիւնը,—  
 Այն ի՛նչ հաւատք էր, այն ի՛նչ սէր,  
 Որ ունէր մեր Հայաստանը...

Այս մեր Արազն՝ որ բարկացած  
 Քարափների միջեց վարար

Գարնան գնում է դէպի ցած,  
 Գոռում, դռում է անդադար,—

Այնտեղ, մեզ մօտ էր, որ առաջ  
 Մեր զինաւոր սուրբ Վարդանը  
 Լուսաւորչի սուրբ Աջն ու Խաչ  
 Պաշտպանեց, և Աւետարանը:

Այս մեր բարձր լեռներն որ կան,  
 Սրանց այն զին կայ մի մեծ դաշտ,  
 Է՛լի լեռներ, է՛լի դուրան,—  
 Նոր զալիս է պարսիկն անհաշտ:

Ահա այդպէս հեռու հեռուից  
 Հայոց զրկում է խիստ հրամանք  
 Քաղաւորը՝ կռապաշտ պարսից,  
 Որ մեր Հաւատքը ուրանանք:

«Վերցուի՛, ասում է չար արքան,  
 Հայոց Հաւատքն այս աշխարհքից,  
 Թող Հայերն ի՛մ հաւատիս գան,  
 Քրիստոս զրկուի իրա փառքից:

Հայերն էլ թող պաշտեն կրակը,  
 Ամենքիս նա՛ լինի աստուած,

Ասում է, և արեգակը,  
Որ հուր-անշէջն է մեզ տուած»:

Այս որ լսեց քաջը՝ Վարդան,  
Վառուեց, լցուեց իւր սուրբ հոգին,  
«Ինչքան կ'ուզեն հրաման կարգան,  
Ասաց, թողնիլ չեմ ոչ որին»:

Թագաւորն էլ ասաց. «Այդպէ՛ս. —  
Տեսնենք ո՞վ դուրս կը գայ ինձ դէմ,  
Զօրքերս առած կը գամ հրէս.  
Ամբողջ աշէարհդ կը քանդեմ»:

«Հա՛, ոչ որի թողնիլ չեմ ես,  
Ասաց, կրակին զոհ չեմ անում,  
Սուրբ Հաւատքի՛ս դու ընդդէմ ես, —  
Կրակապաշտ ես չեմ դառնում»:

— Է՛յ թագաւոր դու անօրէն,  
Հապա կը ընե՞նք կրակապաշտ,  
Ո՞վ կ'ուրանայ լոյս-Հաւատքէն, —  
Զենք ուրանալ, պարսիկ անհաշտ:

Մեր Հաւատքն է Լուսաւորչին,  
Քրիստոս: Գրեց հիմքը Հաստատ.  
Կրակն-արևը թող կորչին, —  
Յե՛ա կաց, հերիք է, անհաւատ:

Սուրբ Վարդանը չի՛ մոռանալ  
Հայոց ազգի սուրբ Հաւատքը,  
Հայ-քրիստոնէն չի՛ ուրանալ  
Լուսաւորչի լոյս-Հաւատքը:

Սուրբ Վարդանը հեծաւ իւր ձին,  
Զայնեց հայոց զիւղ ու քաղաք.  
«Ով սէր ունի լոյս-Հաւատքին,  
Թող գայ, ասաց, նա իմ քամակ»:

Նրա ձայնին վաթսուն հազար  
Զէնքը ձեռին կարիճ գնաց —  
Բողոք հայերը հաւասար  
Թողին եկան պարսից զիմաց:

«Պահէնք մեր սուրբ Աւետարան,  
Լուսաւորչի մեր Աջն ու Խաչ»,

Կարիճ՝ներին կանչեց Վարդան,  
«Գնանք, վազե՛նք պարսից առաջ»:

Սուրբ Վարդանայ զինաւորին  
Ձայնն որ հայոց քաջերն առան,  
Իսկոյն և եթ սուր քաշեցին,  
Կռապաշտ պարսից վրայ ընկան:

Աջ ու ձախից վար ՚ին թափում  
Թաղաւորի զօրքերն ամեն,  
Ընկնում էին արնած տափում  
Սուրբ Վարդանայ ձեռքի սրէն:

Բայց որ այն տաք կռուի միջին—  
Աստուած ուզեց—հրեշտակն եկաւ,  
Տուր քո հողիդ, ասաց քաջին,—  
Սուրբ Վարդանն էլ հողին տուաւ:

Նրա հետ էլ շատ կարիճներ  
Հայոց կողմից ընկան դեպին.—  
Նրանց արգար սուրբ հողիներն  
Նրկնքում են, Ասածու մօտին:

Մեր պապերն էլ նրանց համար  
Նուիրել են իրենց կեանքը,

Ուսով կրել են կիր ու քար,  
Ու բարձրացրել մեր այս վանքը:

Մեռնե՛մ նրա սուրբ շնորհքին,  
Վերից տարին երեք անգամ  
Լոյս է բերում մեր աշխարհքին,  
Ու մեզ վրայ ունի խնամ:—

Գէ՛հ, որդիքս, այս մի բանը  
Մաքերնուդ մէջ լաւ կը պահէք,  
Ոնց զինաւոր սուրբ Վարդանը՝  
Աստուծուցը դուք միշտ կ'ահէք:

Ականջ արէք իմ խրատիս,  
Ուր լինիք, ինչտեղ զնաք,  
Հաստատ եղէք լոյս-Հաւատիս,  
Լոյս-Հաւատը չմոռանար:

Գուրսը սլուլ ու բուք է դեռ,  
Խաղաղել է ամեն ներսին,  
Ձանձրոյթ չունին մատաղ սրտեր,—  
Գլշեր մօտ է լուսաբացին:

Երեխաներն հանգիստ ննջում,  
 «Լոյս-Հաւատին հաստատ լինենք»,  
 Քնից նրանք են շնջում,  
 «Լոյս-Հաւատը չթողնենք»:

1886



Ա. Լ. ՊԵՍՆ ՈՐՄՈՐԳ

[ՇԻՆԵՐԵՅ]

—Ձե՞ս ուզիլ դու գտնն արածես,  
 Գտննուկն է հեղ ու խոնարհ,  
 Առուի ափին սրինգ կ'ածես,  
 Նա կը խայտայ վեր ու վար:  
 «Ախ, չէ՛, մայրիկ, թող ինձ երթամ,  
 Լեռան գլխին երէ որսամ»:

—Ձե՞ս ուզիլ դու ոչխար տանես  
 Փողի ձայնով արօտը.  
 Կերդես անոյշ, կը պահպանես  
 Կանաչ սլրակում քո հօտը:  
 «Ախ, չէ՛, մայրիկ, թող ինձ երթամ,  
 Վայրի լեռան գլխին ման գամ»:

—Ձե՞ս ուզիլ դու ծաղիկ պահես,  
 Ծաղիկ-ծաղիունք մարդերում,  
 Գուրսը չկայ սիրուն պարտեզ—  
 Վայրի է ողջ լեռներում:  
 «Թող դու ծաղիունք, թող որ ծաղկեն,  
 Մայրիկ, թող ինձ ելնեմ բակէն»:

Ու քաջորդին որսի դնաց,  
 Զդառում է նա հեռու-վեր,  
 Անդուլ հեռու խիզախընթաց,  
 Դէպի լեռան խուլ տեղեր:  
 Նրա առաջ, քանց հողմ արագ,  
 Փախչում է մի այծեամ վայրագ:

Լերկ-ապառաժ սարաւանդից  
 Թեթեւ քայլքով վազվառում,  
 Եւ ժայռերի պատառուածքից  
 Այծեամն անվախ ցատկառում:  
 Բայց ետեից, աղեղ ձեռին,  
 Գալիս յանդուզն իւր թշնամին:

Նա լեփ քերծի վրայ փախչում,  
 Կախուած մնում է ծայրին,  
 Ուր ժայռն ուղղորդ մէկէն կորչում,  
 Անհետանում է ուղին:  
 Ներքէն ընկնում անդունդը խոր,  
 Ետէն որսորդն աղեղնաւոր:

Նա սարսափած, լուռ հայեացքով  
 Կեանք է հայցում բիրա մարդէն,—

Ի զ՞նք, աղեղն անգութ ձեռքով  
 Զիդ լարել է նա արդէն—  
 Յանկարծ . . . տեսնես, ելնում է վեր  
 Մութ անդնդից լեռնուղին ծեր,

Եւ պաշտպանում հզօր աջով  
 Իւր հալածուած կենդանուն:  
 «Ինձ մօտ էլ ես մահ ու վրդով»  
 Գոչում է նա, «բերում դուն,  
 Տեղ՝ ամենքին կայ աշխարհում,  
 Ի՞նչ ես իմ հօտը չարչարում»:

1886



## Ո Ւ Խ Տ

Յիշումես այն ժայռն ամպերի տակին,  
 Բուռնում են ուրտեղ օձերն ահագին,  
 Ուր քարի տակից բղխում է աղբիւր,  
 Հազար մի մանով կաթ-կաթ իջնում վար,  
 Եւ կաթի միջին ճաճանչ խաղում բիւր:

Այնտեղ, սիրահար,  
 Տեսանք նախ իրար:

Յիշումես մատուռ ժայռի կատարին,  
 Իշխում է վերից նա մեզ-աշխարհին.  
 Կանաչ ու կարմիր դրօշները ծածան  
 Խաղում են այնտեղ, ծփում անդադար,  
 Եւ հեռու սարին շողում ծիածան.

Այնտեղ, սիրահար,  
 Նշեցինք իրար:

Յիշումես անշուք սեղանը մատուան,  
 Քաղցրաբոյր խնկեր ծխեցինք վրան,  
 Վառեցինք այնտեղ մոմերը փայլուն,

Վառեցինք և մեր տենչանքներն արդար,  
 Ուխտեցինք միմեանց սրտի սէր անհուն.

Այնտեղ, սիրահար,  
 Մեր ուխտն յիշէ՛ յար:

1886



ՀՌԵՆՈՍԵԱՆ ԱԼՔ \*)

[Հէյնէեց]

Այս ի՞նչ բան է, որ անընդհատ  
Տրտում-ախուր եմ պսպէս.  
Վաղի ասած մի հին հեքաթ  
Երբէք զնում չէ մտքէս:

Օգը զով է, օրը մթնում,  
Հռնոսն հոսում է հանդարտ,  
Լեռան կատարը վառվում  
Վերջալուսին շողալարդ:

Սիրուն կուսան մի նստում է  
Վերեն, այնտեղ հրաշաղան.  
Հանդերձն ոսկի փայլիտում է,  
Սանրում նէ հերը դեղ ձան:

Նէ սանրում է ոսկի սանրով,  
Եւ հեան ասում երգ ախուր—

\*) ԱԼՔ — ջրերի կանացի ոգի:

Ներա երգերն, անոյշ-անխոով,  
Զօրեղ են և հրաշալուր:—

Փոքրիկ կրի \*) մէջ նաւաստուն  
Բռնում անձուկ կաթողին,—  
Նա նայում չէ խոչ-խթերուն,  
Նա նայում է բարձունքին:

Քիչ ևս,—ահա կոհակները  
Կլլում են կուրն ու նաւաղ,  
Եւ տե՛ս, այլ ևս չկայ վերը  
Երգիչ ալքը դեղանաղ:

1886

\*) Աուր — փոքր մահոյի:

ԵՐԵՒԱՅԻ ՕՐՀՆԵՐԳԸ ԶԱՐԹՆԵԼԻՍ:

[Լամարտինից]

Ո՛վ Հայր, որին պաշտում է Հայրս,  
Դու, ում կանչում են ճեղաչոք,  
Ոյր քաղցր-ահեղ անունից լոկ  
Խոնարհում է ճակատն իմ մայրս:

Ասում են թ' այս արփին պայծառ  
Քո աջիդ մի՛ խաղն է մենակ,  
Թէ նա ճօճում է ոտքիդ տակ  
Ինչպէս կանթեղ մի ոսկեվառ:

Ասում են՝ Դու ես ճնեցնում  
Դաշտահալի ձագուկներին,  
Հոգի տալիս մանուկներին,  
Եւ նրանք Քեզ են ճանաչում:

Ասում են՝ Դու ես զարդարում  
Գոյն-գոյն ծաղկով բուրաստանը,  
Եւ առանց Քեզ միգաստանը՝  
Միշտ անբերրի՛ բերք չէ բերում:

Քո բարութեան պարզեաներին  
Ողջ տիեզերքն է հրաւիրուած,  
Միջատն անգամ չէ մոռացուած  
Բնութեան այս մեծ խնջոյքին:

Գառն արօտին ծոթրին կրծում,  
Կանաչ սէզը քաղում է այժ.  
Ճանձն՝ ամանիս պուկին նստած,  
Կաթիս ճերմակ շիթն է ծծում:

Սրտոյան ունի դառն հասիկը,  
Որ հասկաքաղն է վար ձգում,  
Ծիտն աղունի ետքից գնում,  
Մօրից կախուում է մանկիկը:

Եւ Քո ամեն տուրքի համար,  
Որ բաշխում ես օր-ամենայն,  
Կէսօր՝ իրկուն՝ առաւօտեան,  
Բաւ է անունդ տալ յօժար:

Տէ՛ր, իմ շուրթն էլ է թոթովում  
Անունդ՝ ահեղ և հրեշտակին—  
Քո փառաբան դասի միջին  
Մանկի ձայնն է անգամ լսում:

Աստու՛մ են թէ շուտ է ելնում  
Մեր խոնարհ գովքը Քո ունկին,  
Թէ հրեշտակներն են երկնքին,  
Եւ մենք նրանց ենք նմանում:

Օ՛հ, որ այդպէս հեռուից Գուն  
Լսում ես մեր խղճն ու փափագ,  
Ես կրխնդրեմ Քեզ շարունակ՝  
Ինչ որ կարիք կայ ամենուն:

Աստուած, ծորանք տուր աղբիւրին,  
Ճնճղուկներին փափուկ փետուր,  
Գառնուկներին Գու գեղմը տուր,  
Եւ ցող ու հով մեր անգերին:

Առողջութիւն տուր հիւանդին,  
Եւ մուրացկին կտոր մի հաց,  
Տուր որք տղուն անակն ուզած,  
' Լ ազատութիւն բանտարկեալին:

Աստուածաբախ ամեն մի հօր  
Մեծ ընտանիք տուր Գու, և տուն,  
Եւ ինձ խելք ու երջանկութիւն,  
Որ լինի մայրս բախտաւոր:

Փոքր եմ, լինիմ բայց բարեմիտ,  
Քանց այն մանկիկը տաճարին,  
Որ տեսնում եմ մահճիս սնարին,  
Ամեն առ' Լօս գեղաժպիտ:

Սուրբ անունդ միաքս բեր յար,  
Գիր աղքատին ճանապարհիս,  
' Լ առատութիւն դիր իմ ձեռիս,  
Որ ես սփռեմ փառքիդ համար:

Եւ թող իմ ձայնս ելնի դէպ Քեզ,  
Քան ինկի ծուխն անուշարար,  
Որ ոլորում է սուրբ բուրվառն  
Երեխայոց ձեռքին՝ ինձ պէս:

1886



## ԳԱՐՆԱՆ ՍՊԱՍԵԼԸ

[Ռուսերէնից]

Ծաղիկ մի՛ պտուէք  
 Զմեռուայ դաշտում:  
 Իեռ մեր աշխարհին  
 Սառ-ձիւնն են իշխում:

Հողին խոնարհած  
 Զեան ծածկոցի տակ,  
 Ննջում են նրանք,  
 Ծաղկունքը տաք-տաք:

Ա՛խ, ե՞րբ կըզարթնի  
 Նոր ծիլը ծաղկանց,  
 Ե՞րբ մէզն ու մռայլ  
 Կըթողնեն մարդկանց:

— Զէ՛, չեն լինիլ միշտ  
 Բուք-սառնամանիք,  
 Մեզ մօտ կըզան շուտ  
 Օրե՛րն էլ ջերմիկ:

Շուրջ կ'անցնի դարուն  
 Շուտով մեր դաշտակ—  
 Վեր կ'եղնեն անտառն  
 Եւ անդն ու գետակ:—

Նա կըխորտակէ  
 Սառուցէ շղթան,  
 Կըխլէ պաղած  
 Ծածկոցը բնութեան:

Զե՛ն լինիլ ծաղկունքն  
 Երկարաւուրց քուն,  
 Կընայեն տղայքն,  
 Ու կ'ասեն «գարուն»:

1886

ԼԵՌՆՈՐԴՈՒ ՔՈՒՆԸ ՓՈԹՈՐԿԻՆ

Նայէ՛, փոթորկից առաջ ծիծեռներն  
Ի՞նչպէս ցածրից են թռչում խմբովին,  
Օգն ի՞նչպէս հեղձուկ է ու ծանրերեր,  
Ի՞նչպէս մուժ պատել լայնարձակ հով-  
աին.

Դիզւում են ամպեր վերևում անդուլ...  
Հնւ, ահա հեռուից որոտում է խուբ:

Նրջմոյիկ քամին մերթընդմերթ միայն  
Փռչին սիւներով ոլրում անցնում է.  
Թանձր թուխպն ահա սարերի վրան  
Խորին մթութեամբ ինձ վախեցնում է.  
Տե՛ս, աե՛ս, բորբոքուեց ողջ, և ճայթելէն  
Վազեց վրայից վիշապը հրեղէն:

Փրկէ՛ մեզ, Աստուած, ամեն ինչ չորս-  
գին

Վառուած ծիրանի երանգով՝ շողում,  
Լեռ, անդ ու վրան և մարգագետին,  
Կարմիր են հագել ամեն, ու դողում:

Բայց մանկիկն անհող իւր օրօրոցին՝  
Հանգիստ ննջում է բնութեան ծոցին:

Հնւ, ինչպէս թաղման սգաւոր դուշակ,  
Հնչում է ամեն կողմից խռնչիւն.  
Վախկոտ սրտերի մէջ միատեսակ  
Փոթորկի ձայնից պաղւում է արիւն.  
Նրկիրը սարսում, դարաւոր կաղնին,  
Ամբողջ կոտորուած, պառկում է գետ-  
նին:

Գոռում է երկինք, դռում է անտառ,  
Գազան, թեւաւոր դառնում ահաբեկ,  
Գետախոր սուղում ձկների վառ, —  
Եւ մանկիկն էլն չէ վախնում երբէք,  
Խաղաղ ննջում է վրանի առաջ,  
Փոյթը չէ նրան փոթորկի հառաչ:

Որտա, դղրդոց, ճայթիւն ու կայծակ  
Նրան անուշիկ օրօր են ասում,  
Եւ հեղեղասահ վիժանքն և առուակ՝  
Քարերի միջից զայրադին վազում:

Եւ վայրենաբար փրփրում, մռնչում,  
Մանուկին դաշնակ երգեր են հնչում:

Թոթաւուչ անձրւն՝ անձրւր վա-  
րար

Տեղում, ողողում սար ու ձոր բոլոր,  
Յանկարծ... խշրտաց երկնքիցը վար  
Աստուծու պատիժ կարկուտը խոշոր—  
Լաց եղան մարդիկ, կենդանիք լացան.  
Ոսկեգեղ հասկից արտեր մերկացան:

Բայց մանկիկն անհոգ՝ իւր օրօրա-  
նում

Անուշակ քնով ննջում է հանդարտ,  
Ժպիտը բերնին սիրուն խաղ անում,  
Սյտերին վառում է ծխանի վարդ:  
Ի՞նչպէս զեղանի է նա, ու չքնաղ,  
Տէր ընդ քեզ, աղէկ, քուն եղիւ խա-  
ղաղ:

Անցաւ փոթորիկ, դադարեց որոտ,  
Նորից երկնքի կապոյտ կամարին

Փայլում է արև պայծառ ու բոցոտ,  
Եւ հեղիկ նայում ցաւած աշխարհին.  
Խոտ ու բոյս ամեն, թօնով լուացուած,  
Յնծում են անդում, կանաչ, ճոխացած:

Մանկիկը զարթնում նայում է ան-  
թարթ

Թ'արեգակն ի՞նչպէս պերճ է փայլկտում.—  
Ի՞նչպէս դոհ է նա, ուրախ ու զուարթ.  
Սչերը մեղմիկ դէս-դէն շողկտում,  
Ժպտում են վերի կապոյտ խորանին,  
Ժպտում և լեռան, և հին վրանին:

1886



ՈՒՅԻԿ \*) ԵՒ ՊԱՏԱՆԻ

Լճակը խաղաղ ժպտում է, խնդում,  
Լճակը լողի կանչում ամենքին,—  
Ափին պատանու սրտիկը թնդում,  
Խորին ցաւերով խռովում է հողին:

Եւ մինչ նա յուզւում սրտի տանջանքէն,  
Եւ մինչ նա ջրին նայում է անթարթ,  
Աղիքներն ահա բացւում են մէկէն,  
Եւ խորքից ոքմին ձայն տալիս զուարթ:

«Ձե՞ս ուզում, պարման, ինձ հետ  
լինել միշտ.

«Ձե՞ս ուզում իջնել ալիքի տակը,—  
«Այնտեղ չկայ դառն աշխարհային վիշտ»,  
«Ոնցորդ է այնտեղ՝ ջրի յատակը»:

Պատանին տխուր հեռու է քայլում,  
Սրտի մէջ յուզմունք խռնում են ան-  
հուն.

\*) Ուիտիկ—ջրի ասի ապրող շար ոռի:

Պայծառ լուսինկան ջրի մէջ փայլում,  
Եւ ուխիկն էլի ասում պատանուն.

«Տես՞ ո՞նց, պատանի, լուսնակը շո-  
ղում,

«Բէմքը լուսնում է սառը ջրին.  
«Արեգն էլ պայծառ, չէ՞ որ նա լողում,  
«Հրձոււմ է ցերեկն հետ ալիքներին:

«Ասողեր մարդարիտ, երկինք կա-  
պուտակ  
«Քեզ չե՞ն հրապուրում կայտուն խա-  
ղերով.

«Քեզ չե՞ն հրապուրում ալքերն հեր-  
արձակ,

«Ուրախ պար բռնած լուսնակ դիշերով»:

Ասում է ուխիկն ու ջուրը մտնում  
Լճափին կանգնած պատանին շուար,  
Անձկում է սրտիկն, աչքերը մթնում,  
Մթնում է նրա կեանքի փուչ աշխարհ:

Լճի երեսին ալքերը սիրուն  
Անտարտում երգով կանչում խանդակաթ,

Պարի են կանչում արամած պատա-  
նուն,—  
Եւ նա ջուրն ընկնում կեանքից յու-  
սահատ:

Լճակը կրկին ժպտում է, խնդում,  
Լճակն հանգստի կանչում ամենքին—  
Ափին պատանու սիրտն էլ չէ թնդում  
Խորին ցաւերով խռովում չէ հոգին:

1886 հոկտեմբ. 31

ՈՍԿԵՄԱՅՐ-ՏԻՐԱՄԱՅՐ

Անձաւացի Անձևացիք  
Թողնում Պաղատն ու պինդ Կանգուար,  
Հայր-Արամազդն ու սէր-Աստղիկ,  
Թողնում զալիս են Գարբնաց-Քար:

Գարբնաց-Քարին բարձր կանգուն  
Կայ Անահայց ոսկի պատկեր.  
Գիշեր-ցերեկ դիմաց ոսկուն  
Շարժում են հոն հզօր ձեռքեր.

Շարժում են միշտ, ածում կռան,  
Եւ շիկավառ երկաթ ծեծում  
Ահագնագոռ սալի վրան.  
Եւ ծեծելիս չորս դին հեծում,

Հեծեծում է, գողում քարը,  
Եւ արձագանգ բերում, տանում:  
Դղորդն ընկնում ողջ աշխարհը,  
Եւ խուռն ամբոխ ոտքի հանում:

Եւ խուռն ամբոխ Անձևացիք,  
Թողնում Պաղատն ու պինդ Կանգուար,

Հայր-Արամազդն ու սէր-Աստղիկ,  
Թողնում գալիս են Գարբնաց-Քար:

Գարբնաց-Քարին պսակ հիւսում  
Մեծ բարերար Ոսկեմօրը,  
Եւ նրանից կեանք են ուզում,  
Ու բոլորում շուրջ բոլորը:

Ու բոլորում, բռնում են պար  
Ոսկիահաստ դից չորեք դին.  
Սալը թնդում է անդադար,  
Ու չափ տալիս ժողովրդին.

Եւ ժողովուրդը կաքաւում,  
Ու կեանք հայցում Ոսկեմօրից,  
Իսկ դարբնոցի քուրան վառւում,  
Մաքրում ախտերն ախտաւորից...

Եւ մինչ ամբօխն անում է պար,  
Եւ մինչ թնդում է գոռ սալը,  
Ահա գալիս է Գարբնաց-Քար  
Բարթուղիմէ առաքեալը:

Նա գալիս է Աստուածամօր  
Հրաշակերտ պատկեր ձեռին,

Եւ հէնց Հասնում է Ոսկեմօր  
Ոսկիածին դից պատկերին,—

Ոսկի պատկերն ընկնում է վար,  
Լռում յանկարծ զնդանը գոռ,  
Գաղբում ձեռքերը կռանահար,  
Եւ շուրջ ամբօխն ապշում բոլոր:

Եւ մոլթ այրից ահա սւեր,  
Հսկանե՛րը կռանահար,  
Սարն ի վեր են ելնում դուեր,  
Եւ կատաղած նայում խոնարհ:

Եւ գոռում են, «վրէժ» գոչում,  
Խառնաղանձին հանում սարսափ.  
Եւ ուժգնակի քարեր ձօձում,  
Ժայռեր ձգում թանձրատարափ:

Խառնիճաղանձն անցնում իրար,—  
Իսկ Առաքեալն առի—անխռով  
Ելնում է վերը, Գարբնաց-քար,  
Եւ Տիրամօր սուրբ պատկերով

Խաչակներում է բոլորդին,  
Խաչի նշանն ամբառնում վեր,  
Յոյց է տալիս ժողովրդին,—  
Ու չքանում են սև դեեր:

1886 նոյ. 29

## ՋՈՒՂԱՅԻ ԳԱՂԹԸ

Ա.

### ՋՈՒՂԱՅԻ ԿԱՄՈՒԻՋԸ

Ջայրացուկս առնու Երասխ ընդ  
կամուրջ: Վ իրգ. Էնէակ.

Եօթը կամար գետի վրան  
Իրար պարզած են յաղթ թևեր,  
Եւ եօթը սիւն ձորի բերան  
Ջրում կանգնած են անվեհեր:

Հազար տարուց կայ աւելի  
Գոռոզ թաղերը կամրջին  
Կապկապած են դեան ահռելի,  
Ու ճնշում են իրենց տակին:

Գետը՝ գերուած՝ հեծեծում է—  
Մանր է լուծը նրա համար—  
Եւ բարկացայտ նա ծեծում է  
Օր և գիշեր սիւնն ու կամար:

Նա ծեծում է, ճնշում ի զուր,—  
Քան ձուլածոյ պողվաւ-երկաթ,

Նրանց զանգեղ է յարամուր  
Սէրն անջատուած և խանդակաթ: \*)

Հօր էր շատ սրտի սէրը,  
Ահեղ գեար նա նուաճեց,  
Զգեց նրա շղթաները,  
Եւ դէպի մի'ւս դին յառաջեց:

Անցան տարիք,— ահ, սէրն անցաւ,  
Եւ սիրանոյշ կապի փոխան,  
Կամուրջն— երկրի փառքը— դարձաւ  
Ծանրագնաց ոտքի կոխան:

Ահա գալիս է կարաւան  
Հեռու երկրից մեծ բեռներով,  
Մեծափարթամ Ջուղա-աւան  
Նրան մնում էր օրերով:

Գալիս, գնում են շարունակ  
Շարան ուղտեր զիշեր-ցերեկ—

\*) Աւանդութեամբ քուղայի կամուրջը շինել է մի հարուստ երիտասարդ, որպէս զի ամեն օր կարողանայ անարդել անց կենալ Երասխն և այցելել Եւ իւր սիրուհուն, որ միւս ափին է բնակում եղել:

Գեար կոծում է բեռան տակ—  
Շարանը չէ հատնում երբէք:

Գեար մոլում է, կատաղում,  
Կուում սաստիկ քարերի հետ,  
Եւ նա բնաւ չէ խողաղում  
Հսկայ կամուրջն անել անհետ...

Բայց դեռ կամուրջը կայ հաստատ,  
Նա դեռ ծնչում է գեար զու,—  
Նրա վրով դեռ անընդհատ  
Հայ մարդիկ են անցնում բոլոր...

Բ

## ՇԱՀ-ԱԲԱՍԻ ԳԱԼՈՒՍԵԸ

Հահարաս... տեսանէր զայնքան  
հարստութիւն եւ մախայր ի սրբ-  
տի... նենգել զնոսա:  
Առաքել պատմ.

Ահա Տաճկին էլ զօրավար  
Իւր յաղթութեամբ հպարտացաւ,—  
Պարսկաստանից առած աւար,  
Նա Երասխի կամուրջն անցաւ:

Եւ հարաւի հզօր արքան,  
Ու հետն անթիւ մարտամբօխը,  
Յաղթող Տաճկի ետքից ընկան,  
Որ նրանից հանեն ոխը...

Եւ տես, կամուրջը շուրջ պատեր,  
Զարդարում են Զուղայեցիք,  
Փռում փայանդազն ոսկեթեր,  
Եւ տան գորգերը գեղեցիկ:

Մօտ սիւներին նրանք իրար  
Անցնում, կանգնում են նոր սիւներ,  
Եւ յաղթական շքեղ կամար  
Բարձրացնում երկինքը վեր:

Անմիտ ամբօխը պերճ զուգուած,  
Խռնում կամուրջն հետաքրքիր.  
Սկաւ արքան—և, ծունդ չոքած  
Ինչպէս մի մարդ, պազնում երկիր...

Զուարթ մանկտին մատաղերամ՝  
Երգ են ասում անուշալուր,  
Եւ փարթամներ կանչում յախուր.  
«Արքայի կեանքը հազար ամ»:

Եւ արքային՝ ոսկին արծաթ  
Գալիս շողում են առաջին,  
Քանց արեզի խաղերն իսկ շատ  
Մայր-Արաքսի ծփքի միջին...

Շլանում է Շահ-Աբասը,  
Յիշում անփառ Զենդեհ-ուուդը, \*)  
Եւ առնելով ոսկէ սպասք,  
Մտքից անցնում չար խորհուրդը...

\*) Զենդեհ-ուուդ, որ կեանքի գետ ասել է,  
Սպահանի գետն է:

Գ

## ԺԱՄԿՈՉ

Եղբարք, ելէք յանոյշ քնուդ,  
Յանոյշ քնուդ, դռն երազուդ,  
Ի յոտն անկեալ ի Քրիստոսի...  
Ժողովրդ, երգ

Պայծառ փայլում է փառաւոր  
Լոյս աստղը մօտ է լուսաբաց,  
Լուել է հոմն, ու դետը գոռ  
Անվերջ կռուից է դադարած,

Անվերջ կռուից կամրջի հետ,  
Որ կապեց սիրտը սիրավառ.  
Ա՛խ, փրկութեան յուսով և եթ  
Կամուրջն եղաւ դեախն աւար: \*)

\*) Աւանդութեամբ մի հարուստ պառաւ գաղթի նախընթաց դեռերը քանդել է տուել Ջուղայի կամուրջը, որ երբե թէ Շահ-Նբասը չկարողանայ ժողովրդին շուսով շուեցնել, և Օսմանցիք հասնեն ազատն:

Փարթամ պառաւ ջուղայեցին,  
Սիրտը վառուած աղբի համար,  
Հրաման հանեց, և հեծեցին  
Մի գիշերուայ մէջ եօթ կամար:

Եւ շարժուեցան բրիչ ու մուրճ,  
Եւ յաղթուեցաւ զոռոզ կամուրջ:  
Կորաւ և սէրն, ու յիշատային  
Անդարձ մտաւ յորձանքի մակ... Ե

Հիմ՞ վառ փայլում է փառաւոր  
Լոյս աստղը վեր, ու լոյսն ի սօս,  
Լուել է հոմն ու դետը գոռ  
Գաղբի կռուից մե՛զմ առաւօտ:

Հարուստ Ջուղան հանդուում է խոր,  
Գեռ չեն բացուել խանթի դռներ,  
Եւ ոչ կարւանն հանում ժխոր,  
Ապրանք բերում, փարթամ բեռներ:

Վաղուց զարթնել է ծերունին,  
Տիրոջ ծառայ ժամհարն արթուն,  
Եւ փառաբանքը բերանին  
Նկել զաւրթն եկեղեցուն:



Նա վեր ելաւ, կոչնակն այնտեղ  
 Բարձր ձայնով հնչեց երկար,  
 Եւ ձայն տուեց հետն երեքհեղ—  
 Նրա ձայնն էր այս հեղ օտար:

«Ելէ՛ք, ելէ՛ք, Հայ-քրիստոնէք,  
 Փամանակը վատացել է.  
 Բաւական է անոյշ քնէք:  
 Հայոց մեղքը շատացել է:


«Նղբարք, ելէք, եկէք Տաճար,  
 Մեր Աստուծուն ընկնէք ոսներ,  
 Մեր մեղքը լանք. դուցէ մի ճար  
 Ու փրկութիւն անէ մեզ Տէր:

«Նղբարք, հերի՛ք անհոգ քնէնք,  
 Մարդ չմնաց մեր աշխարհում,—  
 Մեր մեղքիցն է, որ անօրէնք  
 Բռնի գերի են մեզ վարում»...:

Նրա ձայնը հնչում էր դեռ,  
 Եւ տարածւում աւանն հեռու,  
 Եւ նոր մարդիկն աղօթասէր  
 Ելնում էին ժամ երթալու,—

Թնդաց յանկարծ աւանը շուրջ  
 Եւ խռովեց դուժկան ձայնից.  
 «Ջուղայեցիք հագնեն թող քուրջ,  
 Եւ ողբ ասեն արտասուալեց» ...

Կանչեց վերէն ծերուկն արդար,  
 Սիրտը լցուեց, ձեռքը դողաց.  
 Ընկաւ խօսուն կոչնակը վար,—  
 Վերէն ինքը մոլոր մնաց ...



Դ

Հ Ր Ա Մ Ա Ն



Ե.

Գ Ա Ղ Թ Ը

Յահէ սպառնալեաց մահուան ակամայ  
կամօք ելին ի գնայ:—Աղաղակ բար-  
ձեալ աղիողորմ ձայնիւ արտասուօք . . .  
արկին զբանախոսն ի գետն:

Առաքել պատմ.

ձոխ Ջուղայի վիճակն ընկաւ.  
Երրորդ օրը վճայ հասաւ—  
Եւ, չուելու համար պատրաստ,  
Ծանր բեռնուժ են էջ ու զրաստ:

Ծանր բեռնուժ կարաւաններ,  
Որ խմբուած են ամեն կողմեր,—  
Ի՞նչ, կրբաւե՞ն արդեօք նրանք  
Բառնալու լոկ աղնիւ ապրանք . . .

«Դ՞ուրս եկէք, զ՞՛ւրս, թողէք Ջուղան» .  
Կանչեց սաստով գաղթապետը,—  
Ու շարժուեցին կարւան-կարւան  
Փողոցներից դէպի դետր:

Գետափն եկան աղջիկ-կանանց  
Շուտով ահա խմբերը հոժ—  
Գերեվարի կանչին՝ նրանց  
Խառնուժ էր լացերն ու կոժ:

Քեզ համար են, սուրբ Հայրենիք,  
Քեզ համար են լալիս նրանք,—  
Մրմուռուց լռէք, ալիք,  
Դուք էլ կոժէք մեժ չարչարանք . . .

«Դուք Հայրենի արտեր, բլուր,  
Էլ չենք տեսնիլ մենք ձեզ երբէք.  
Կըթողումենք, չգիտենք ուր,  
Սարկութեան մէջ սրտաբեկ:

«Ո՛հ, որքան, որքան երջանիկ  
Են մեռելները, մեր պապեր,  
Քան թշուառներս կենդանիք,  
Որ կրում ենք բախտի դաւեր:

«Մեր պապերը, նրանք զոնէ  
Հայրենիքի մէջ պաշտեցին  
Իբրև ազատ հայ-բրիստոնէ  
Մեր սուրբ հաւատք—եկեղեցին:

«Տեսէ՛ք, թի՛ն վրայ նրանք  
Այժմ էլ ազատ բուն են լինում:  
Եւ աշխարհիս վեշտ ու տանջանք  
Հեռու են այն տեղից փախնում:

«Բուք էլ հեռու, մեր կոծ ու վեշտ.  
Թող չխմանան մեր տառապանք,  
Հանգիստ ննջեն նրանք ընդ միշտ.—  
Մնա՛ք բարով դուք, սուրբ դամբանք:

«Մնաս բարով, Վերին-Վաթան,  
Եւ դու մեր սուրբ Աստուածամայր.  
Մեզ յետ բերես շուտ Հայաստան,—  
Քեզ ենք կանչում յօդ մեզ համար...»

«Ա՛ռ դու, Երասխ, մեր աւանդը,  
Ի՞նչ որ սկզբից վկայ ես լուկ,  
Եւ ջրերով միշտ մեր անդը,  
Այսքան թափել չես արտասուք,—

«Տես աչքերնուս մեծ հեղեղը,  
Ու պինդ պահիր սուրբ բանալիքը,  
Եւ յաւիտեան նրանց տեղը  
Լուէ թող քո անյուշ ալիքը» ...

«Հնա՛յա, ճան՛պարհ, հնա՛յա ճան՛-  
պարհ» .

Սաստ հրամանից ողբը խեղճուեց,  
Եւ գետափով դէպի խոնարհ  
Ջուղայեցոց զաղթը շարժուեց

Ի՛նչպ՛ այնտեղ, ուր հեռու հեռուն  
Ձգւում են լայն դաշտերն անմոռ.  
Այնտեղ է և գետի մեծ հունն,  
Ուր դալիս են բռնի բոլոր:

Գալիս, գալիս ամբոխն անվերջ,  
Հայ ժողովուրդն աղքատ, թշուառ,  
Հարստութիւն, անդերը պերճ՝  
Վատ թշնամուն թողած աւար:

Այնտեղ գալիս և շատ ալիք,  
Գալիս, փուլում են լայն տաշտում,  
Եւ մրմնում են խաղալիք  
Ամբոխի դէմ, ու չեն հաշտում...»

Ա՛հ, իւր ետեն է պարսն ահեղ,  
Առջեն ընկնում յորձանքն անհուն—  
Եւ շուտ կընտրեն շատերն այնտեղ  
Յորձանքը խոր քան թշնամուն...»



## ԶԵՆԴԵՀ-ՌՈՒԿ

Վշտանային ազգն պարսից զի բքիս-  
տոնեայք պղծեն զջուրն:

Առաքել պատմ.

Հեռու պայծառ երկնքի տակ  
Հրատոչոր երկրի պասուք  
Զովացնում է մի զետակ,  
Համեղ ինչպէս քաղցր կաթնուկ:

Անմահական Զենդեհ-ռուզին  
Կեանքի շթերն են այն սահում,  
Հոգի տալիս անապատին,  
Եւ անասուն-ասուն պահում:

Քնի միջեց նա մանիման  
Ոլորում է մեղմ ընթացքով—  
Հանց պարսիկներն էլ մոստուլման  
Նիրհում են իւր ափերի քով:—

Բայց էր Զենդեհ-ռուզը զարթնած  
Այժմ մղում է սաստիկ մարտ,

Նա՛ որ ցայսօր հեղազնաց  
Հոսում էր միշտ լին-հանդարտ:

Նա բրտում է զայրացած,  
Գրդանք տալիս, ու ճիգ թափում,  
Եւ ալիքներն իրար անցած՝  
Եզրէ եզերք են թարթափում...

Գեաւուրն եկել հեռու երկրից,  
Նրա վըպ է դադարել,  
Նրա կեանքի սուրբ ջրերից  
Իրեն համար կէս մասն առել:

Գեաւուրն եկել, ու Սպահանում  
Աշխարհի կէս բազմութիւնը \*)  
Անլուր ու խուժ ազմուկ հանում,  
Խռովում է իւր խաղաղ քունը:

Խռովում քունը Զենդեհ-ռուզին,  
Ձգում, պնդում են շղթաներ,

\*) Սպահան—աշխարհի կէս՝ է կոչուել իւր  
բազմամարդութեան համար:

Կամուրջ կապում իւր երկու զին,  
Հզօր կամուրջը ծանրաբեռ:—

Եւ նա զարթնել խոր անըջեց,  
Հիմ' տեսնում է,— ահա արագ  
Գալիս, գնում են կամրջեց,  
Ու խոնում են մեծ հրապարակ....

Նա տեսնում է ու զայրանում,  
Գրգանք տալիս սարսափելի,—  
Թ'ինչո՞ւ կամուրջն աջող բանում,  
'Է անցնում է դեռ դեաւուրն էլի...



Է

ՈՒՐՈՒԱԿԱՆՔ

[Հին Զուղայ]

Մայր Արաքսի ափերով  
Քայլամորր գնում եմ,  
Հին հին դարուց յիշատակ  
Ալեաց մէջը պտրում եմ:  
Գամառ-Քաթիպա

Սարի տակին ընկնում է դեռ  
Զառիվայրի վրայ մի գիւղ—  
Հին Հնութեան աւերակներ,  
Եւ մի քանի աղքատիկ Հիւղ:

Հազիւ լւում է Հոն մէկմէկ  
Մարդկային խօսքն ու խլրտոց...  
Գիշերային մլար ու մէզ  
Ծածկել են զիւղն ու Հանգստոց,

Նրա ամեն մի խաչարձան  
Եւ բեկորներ, մի մի ուրու,

Այսդին—այնդին կիսակործան  
 Երևում են մութ-մութ հեռու.

Եւ ներքեւ ձորում խաղաղ,  
 Գոչից լռած, Երասխն հպարտ  
 Իւր ալիքն է քշում դանդաղ՝  
 Գետափների միջից անզարգ:

Ձկայ բանուկ կամուրջը հին,  
 Քանի մ'սիւններ հաղիւ միայն  
 Յիշեցնում են աշխարհին  
 Հին Ջուղայի պերճանքն ունայն:

Այլ ևս այնտեղ չէ ժողովւում  
 Խուռն ամբոխը վաճառանոց:—  
 Բայց և ամեն գիշեր լւում,  
 Գալիս է խօլ մի ձայնձայնոց:—

Այն օդեղէն կարւանի զանգն  
 է զնգզնգում հեռու ճանպին,  
 Եւ թախծալից իւր արձագանգն  
 է ճօճում խուլ օդի միջին:

Այն կարւանն է ամեն գիշեր  
 Գիւղի փառքը հեռու տանում.

Նա տանում էր ամբողջ դարեր,—  
 Գիւղի փառքը չէ վերջանում...

Ամեն գիշեր, կէս գիշերին,  
 Այլ և մի ձայն հանում ժխոր,  
 Հնչում ընկնում մէջ սարերին,  
 Գետնի տակը մտնում է խոր.

'Լաւերքների մեծ ոգու հետ  
 Հանգստոցից խսկոյն և եթ—  
 Ձայնում, ելնում են ուրուականք,  
 Եւ սարէսար թռչում նրանք,

Աչք են ածում ամեն բեկոր—  
 Անցնում դետի այն մէկէլ դին—  
 Աչք են ածում ամեն կտոր,  
 Վերջի մնացորդը հին փառքին.


Դեռ ևս արդեօք տե՞ղն են շերիմ,  
 Շէնք ու սիւներ կանգուն կացած.  
 Եւ արդեօք բախտը ոխերիմ  
 Աւերանքից չէ կշտացած...

Արդեօք բացւում չէ առաւօտ,  
 Երբ, օդեղէն շարքի փոխան,

Նորից հնչեն կամրջի մօտ  
Կարաւաններ շարան-շարան . . .

Աչք են ածում— Հաւախօսին  
Հին հանգստոցը դառնում յետ,  
Շշնջում են մէկը միւսին,  
Եւ գերեզման մտնում էլ ետ . . .

1886—1887.



\* \* \*

Վշտով եմ նայում անցեալիս վրան,  
Եւ ապագայիս նայում եմ ահով.  
Քանց երեսայի զգուում եմ նրան,—  
Եւ նրա համար չեմ ես ապահով:  
Ինչպէս ճան' պարհից մոլորած ուղևոր  
Ածում եմ չորագին աչքերս մոլոր,—  
Կը տեսնե՞մ արդեօք մի պատգամաբեր,  
Որ շատ յոյսերիս նպատակ ցոյց տար,  
Որ ինձ իմ կեանքիս որոշումն ասէր,  
Յայտնէր Աստուծու պահած ինձ համար:

Պատրաստ եմ սկսել ուրիշ մի նոր կեանք,  
Բախտի փոթորկի մէջ կրքեր կրել,  
Տանել անձկութիւն, վշտեր ու զրկանք,—  
Ապրել եմ ուզում, ուզում եմ սիրել . . .  
Ահա ժամանակն է,— սպասում եմ լուռ,  
Ներսիս տենչն արդէն զարթնում է յախուռ . . .

Յողնած է հողիս ցրտից ու մթից,—  
 Ես շատ անկենդան մնացի երկար,  
 Ինչպէս նորեղուկ պտուղն հիւթալից՝  
 Առանց արևի՝ թառամ ու տկար...

1887 մարտ 21



ՄԷՐՈՒ ՇԱՀԱՊԵՏ

[ԳԵՕԹԷԿԵ]

Այն ո՞վ արշաւում զիշերը ցրտին:—  
 Հայրն է ուշացած և հետն իւր որդին.  
 Իւր հօրը դողդող կանում է տղան,  
 Հայրն էլ պինդ բռնում տաքացնում նրան:—

Ո՛րդի, ի՞նչ ես կուչ եկել՝ ինձ կանում:—  
 Մէրու Շահապէ՛տը, հայր, չե՞ս տեսնում,  
 Մէրու Շահապէ՛տ, ազին, հրէ՛ն, երկայն:—  
 Որդի, չէ՛, մի շերտ մառախուղ է այն:

Ըն՛ւ սիրուն տղաս, արի՛, եկ ինձ հետ.  
 Շատ սիրուն խաղեր խաղ կ'անեմ քեզ հետ.  
 Շատ ծիծղուն ծաղիկ կան իմ աշխարհում,  
 Մայրս քեզ ոսկի շապիկ է կարում:—

Հայրիկ, իմ հայրիկ, դու չե՞ս էլ լսում,  
 Շահապէտ կամաց ինձ ի՞նչ է ասում:—  
 Հանգի՛ստ կաց, որդի, հանգիստ մնա դուն,  
 Այն քամին խշշաց, հանեց սօսափին:

«Տղան, ինձ հետ դալ բա՛ չե՞ս կամենում  
Աղջկիկներս արգէն չե՞ քեզ են մնում,  
Լուսնակ զիշերով պիտ' երգեն ու պարեն,  
Պարեն, օրօրեն, քեզ անոյշ քուն բերեն» :

Հայրիկ, իմ հայրիկ, ան, դու չե՞ս ատենում  
Մէրու Շահապետի դասերըն այն մթնում:—  
Ո՛հ, չէ՛, իմ որդեակ, հասել ենք բրմուտ,\*)  
Այն հին ուռիքն են երևում մութմութ:—

«Տղայ՛, գրաւեցիր ինձ քո զեղ-պատկերով,  
Կամաւ թէ չգաս, կրտանեմ քեզ զօրով»:—  
Հայրիկ, իմ հայրիկ, հասաւ մեզ, բռնեց,  
Մէրու Շահապետը, մէջքս, կոտորեց:—

Հայրը զարգանդում, քշում է շութափ,  
Ձեռքին պինդ բռնած որդուն ուշաթափ.  
Նա տուն է հասնում արիւն-քրտնեքած,—  
Զաւակը ձեռքին վախից էր—մեռած:

1887.

\*) Բրմուտ—անտառի խիտ ու խոր տեղը:

ԹԱԼԻՍՄԱՆ

[Պուշկինից]

Հոն՝ ուր ծովը ճզվում է յար  
Դէմ անապատ քար-ժայռերին,  
Ուր լուսինը փայլում է վառ՝  
Մթնշաղի քաղցր ժամին,  
Ուր հարեմում հեշտանալով  
Օրն անց կացնում է մուսուլման,  
Հոն դիւթուհին քնքշալով  
Ինձ ընձեռեց մի թալիսման:

Եւ փարելով ինձ, ասաց նա.  
«Թալիսմանս պահիր քեզ հետ,  
Նրա մէջ մի դաղանի ոյժ կայ,—  
Քեզ տալիս եմ սիրուց և եթ:  
Խօթ ու մահից, իմ սիրելիս,  
Մրրիկների և սպառնական  
Փոթորակի կատաղելիս,  
Քեզ չի՛ փրկիլ իմ թալիսման:

Արևելքի դանձերն անգին  
 Նա քեզ երբէք չի՛ շնորհիլ,  
 Մարգարէի ժողովուրդին  
 Նա ձեռքիդ տակ չի՛ նուաճիլ,  
 Եւ ընկերի զիրկն անձկալեց,  
 Դէպ՛ հայրենի երկրի սահման,  
 Օտար, տխուր աշխարհներից  
 Քեզ չի՛ դարձնիլ իմ թախաման:

Բայց երբ նենգժեռ ու չար աչքեր  
 Յանկարծ քո սիրտը կախարդեն,  
 Կամ մեզկ շրթունք մի մուսլ զիշեր  
 Չսիրելով քեզ համբուրեն,  
 Սրտի նոր վէրք ու յանցանքից,  
 Աղնիւ ընկեր իմ աննման,  
 Դժմիտ դաւ ու մոռացօնքից  
 Կըպահէ քեզ իմ թախաման»:

1887 յուլիս 16

Ա.Լ.Ի.Կ

[Ժողովուրդ. չափով]

Գիշերուայ մուսլը տիրեց  
 Դարին ու կանաչ այգուն,  
 Քաղաքի աղմուկը լռեց,—  
 Գրկեց ամենքին խոր քուն:

Անդադրում գետակն է այլք  
 Միայն վարելով մնչում,  
 Եւ քամին, սիրուն իմ Ալիկ,  
 Մէկ-մէկ հանդարտուկ շնչում:

Ես այստեղ պատիւ քամակին  
 Կանգնած, ոսկի թառ ձեռքիս,  
 Նուազում եմ սէր կաթողին,—  
 Քո սէրն է վառում հողիս:

Դուրս ելաւ սարի ետեւն  
 Լուսնակն ոսկեղէմ լրման,

Եւ թովեց աշխարհքս ամեն  
Զքնազ դիւցուհու նման.

Դուրս արի դուն էլ, անձկալիս,  
Փայլէ՛, իմ սիրուն Ալիկ:  
Խաղաղել՛ր, քո սէրն է դալիս,  
Սրտիս ծփծփուն ալիք...

1887 օգոստոս 24



1888-Ի ՏԱՐԵՄՈՒՏԸ

Ա.

Մէջ մոլթ սենեակիս պառկած եմ տխուր.  
Բացում չարատանջ հոգուս առաջին  
Հին ցնորքներիս պատկերը յախուր,  
Ահա մէկը, միւսն... ահա և վերջին,—  
Եւ ուրուների խօլական ու Հին  
Ծանօթ կարւանն, ահ, ելնում է մթնից.  
Նրանք ինձ նշան են անում լռին,  
Նրանք ինձ զլուխ տալիս ծաղրալից:  
Դու գիշերային խաւար չարակիրք,  
Ինչո՞ւ ես ծնում դրանց ինձ տանջանք,  
Ինչո՞ւ ես թողնում գրկէդ արհաւիրք,  
Ինչո՞ւ ես ուզում հոգուս տառապանք...

Ի՞նչ, ի՞նչ էք ուզում դուք, իմ անուրջ-  
ներ,  
Վառուած ուղեղիս հեշաածին սարուկներ,  
Թէ չէ, Խո էի ձեր ծառան անկամ,  
Փայլուն խոսամունքից խաբուած յարածամ:

Բանց, հեռու ինձնից, — դուք ինչպէս նուրբ  
ծուխ

Յնդեցիք օգուժ առանց մի հետքի,  
Գնացիք անդարձ ինչ լեռնային ուխտ,  
Վերացաք ինչպէս բոյրք վառ աղօթքի:  
Ձկաք, չկաք դուք, իմ հին անուրջներ,  
Մի՛թէ դարձել էք նորերին կեանք տաք,  
Նոր վայելչութիւն բերէք ինձ նուէր. —  
Ախ, չէ՛, բերում էք լոկ դառն յիշատակ:

Ինձ երբեմն ձեր անապակ զինին  
Բաշխեց ցանկալի արբեցութեան ժամ.  
Բայց հիմա զարթիւումն իւր խիստ դառ-  
նահամ

ձաշակն է ոլրում արդէն իմ բերնին,  
Եւ ես պառկած եմ անյոյս ու անոք,  
Օտար են ինձնից ոսկի ցնորքներս,  
Որ քանց մեզը անոյշ խանդավառ, անհոգ  
Պատանեկութեան վառում՝ ինձ ժամերս,  
Երբ օրը ցերեկ իմ ինքնահաւան  
Գրգռուն հոգիս, ոնց որ երազում,

Սիրու, հանգստի և վայելչութեան  
Ոսկեղէն աշխարհ էր շուտ ստեղծում:

Ռւր վայելչութիւն, ուր այն աշխարհքը, —  
Մի՛թէ այս խշտիս, և մտքիս տանջանք.  
Ձլնի հալածանքն է իմ տեսած փառքը,  
Եւ հանգիստն՝ ունայն կեանքիս անվերջ  
ջանք:

Հեռու, ցնորքներ, խօլ խաւարի ծոցը,  
Որտեղից եկել էք ինձ չարչարել  
Դուք ցուրտ էք հիմա, այլ ևս ձեր բոցը  
Ձի կարող սրտիս սառոյցը վառել...

Բ.

Եւ ես պառկած եմ վերստին անյոյս,  
Տանջւում եմ սաստիկ դառնագին սրտով,  
Դուրսը ցուրտ է, բուք, չկայ չնչին լոյս,  
Քամին է միայն ձայն տալիս վրդով...  
Դո՛ւ ինչ ես ուզում, վշտակոծ քամի,  
Նախատի՞նք ես դու ականջիս բերում

Սրարքիս համար,—ինչպէս թշնամի  
 Ինչո՞ւ ես սիրաս անխնայ քերում:  
 Ունում ես դռանը, մոլի ձմռան  
 ձանկերի միջին, ինչպէս դառազրում  
 Անապատային ամեհի դազան,  
 Եւ սուլում ես, և գոչում, և գոռում:  
 Երկինքը պատել ես արդէն մէզով,  
 Վարում ես հիմն ձեան անվերջ տարափ,  
 Մերթ ահեղ սարեր զիզում քովէքով,  
 Եւ իսկոյն սրբում ինչպէս մաքուր տափ:

Դ՞նու ինչ ես սուլում, դ՞նու ինչ ես երգում,  
 Քո այդ անմիտ գործը կատարելես,  
 Ինչո՞ւ ես վրաս կծու կատակում—  
 Թէ՞ դու էլ բախտիդ վիճակն ես լալես,  
 Թէ՞ քեզ էլ նոյն ցաւն է հարսծական  
 Անում սարէսար, բարձրից դէպի դաշտ,  
 Ոնց որ մոլորուած և անտիրական  
 Ազգն է թափառում բախտի հետ անհաշտ:

Թէ՞ ուզում ես ինձ կարգալ մեծ խրատ,  
 «Տեսնո՞ւմ ես զիզածս ահագին սար

Հարթում է իսկոյն ինչպէս անապատ,  
 Իսկ ես անվհատ շարունակում յար,  
 Կանգնում եմ նորից աւել մեծ լեռնակ,  
 Լցնում եմ ձորեր թեթեւ փետրանքով,  
 Տքնում եմ անդուլ, գործում շարունակ,  
 Եւ դարձեալ կանգնում մաքրածս ջանքով:

«Այսպէս և մարդու ցնորքի աշխարհն  
 Անմիտ Հրամանքի մի նշանի տակ  
 Թխպում կամ ժպտում է հեշտաբար,  
 Ինչպէս երկնքի պայծառ կապուտակ:

«Այսպէս հէնց որ հինն անցնում է գնում  
 Երանութեան ծոցը, արդէն զուարթ  
 Նորն իւր ոսկեղէն գործուածքն է հինում—  
 Հեշտին վայելքների, անթառամ վառ վարդ»

«Հին սիրուն ցնորքն անցնում է անհետ,  
 Եւ ահա նրա ետեւից ժպտում  
 Նոր ոսկի ցնորքը, և նրա հետ  
 Իւր վայելչութեան ծաղիկը փթթում:

«Հինն անց է կենում, և նորը գալիս,  
 Ինչպէս ոսկեվառ նոր արշալոյսը՝

Ամպերի վրայ փառքով ծագելիս՝  
Հաւաստում է մեր երեկուայ յոյսը:

«Անցնում է զառամ-այլուր տարին,  
Տանելով մարդու ոսկի ցնորքներ,  
Չե՞ն ծնւում արդեօք նրա կատարին  
Նոր տարուայ մաղթանք—բանդազուշանք-  
ներ»...»

Գ.

Ես պառկած էի տխուր, մտառանջ,  
Լսում 'ի քամու անվերջ խրատին,  
Եւ ահա զանգի բարձրաձայն զօղանջ  
Տասն երկու անգամ պատմեց նոր տարին:  
Նոր տարի... Քանի մատաղ սրտերում  
Մոլեղին դարձով արիւնն եկաւ ման,  
Հիմա ծերունի քանի մտքերում  
Ուղեղի ցնորքն է մեծ դանդաչման:  
Վառ երջանկութիւն, ոսկեղօծ անուրջ  
Կէսգիշերային ուրախ վայրկեանում  
Ամենքի զլին սաւառնում են շուրջ.  
Եւ սիրով գրկած, իրար հետ մտնում

Երջանիկ զոյգեր բախտաւորութեան  
Սշխարհը շքեղ, ուր մեծ հանգստեան  
Ծաղկազարդ օրերն են ժպտում եւթ,  
Եւ սէր, և բերկրանք՝ ոսկի ցնորքի հետ:

Քսան և երեք եռուն տարիներ,  
Վաղանցիկ ինչպէս ժամ սիրանուէր,  
Անցիլ եմ արդէն—ո՛հ, քանի՜ նուազ  
Ծնողքս ինձ համար եղել են զուշակ,  
Եւ քանի՜ ինքս եմ տեսել երազներ,  
Ոսկի յոյս վառել այն օրից ի վեր,  
Երբ միտքս տհաս սկսեց հասկանալ  
Եւ վիշտ, և թախիծ, խնդութիւն և սէր,  
Երբոր թափեցի ես իմ սառնահալ  
Սրտիցս անոյշ արցունքի ծովեր...»

Ո՞ւր են իմ խոկերս:—Անհետ անցկացան  
Ինչպէս զեփեւոթին ապուստի վրան—  
Ո՞ւր են իմ տենչանք, խնդազին յոյզեր,  
Ո՞ւր իմ փրկութեան փայփայած յոյսեր:

Արդի՛ւնքը Հապա, դորձածս վաստակ,—  
Մթթէ չէր խանձում ներսի դիս կրակ,  
Ամենայն բոպէ պատրաստ բորբոքերը  
Եւ ժողովրդեան խինդ ու լաց ոգեր...

Ա՛խ, անցա՛ւ, կորա՛ւ իմ ոսկի երագ,  
Սրտիս մէջ մնաց միայն մուսլ մութ,  
Ինչպէս վերջնավառ ժպիտն Հեղանագ  
Շուտով մթնեցնում է արևամուտ,  
Ինչպէս որ յանկարծ մարում է ճրագ,  
Եւ առերը լցնում անթափանց խաւար:  
Գոնէ նոր յոյսեր—օրհասի աւար—  
Նոր ցնորք ջարդուած սրտիս տան ճարակ:

Ա՛խ, առէք շուտով ինձ այնպիսի բոց,  
Որ երբէք վառեց իմ սիրտ ու Հողին.  
Որ երջանկութեամբ լցնում մարդու ծոց,  
Կեանքը սիրել է տալիս կաթողին:  
Թող աստղների այն հուր հեղափայլ,  
Որ տոչորում է երկնքի ճակատ,

Գայ, իջնէ սրտիս խորշերը մուսլ,  
Թօթափէ վրաս բոցեղէն Հրատ.  
Թող ելեքարական սիրոյ մեծ կայծակ  
Անցնի մի անգամ նեարդերիս միջից,  
Եւ աղիտաւոր կեանքի փոթորակ  
Ճնշէ իմ կրճկունքը դառնակակիծ.  
Թող ճնուին ներսդիս անհամար ցնորք,  
Ապագայ կեանքի ոսկեզան երագ.  
Թող աստուածային բախտաւոր շնորհք  
Ապառու՛մ սիրտս վառէ Հանապագ...

1888 յունուար 1

## ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԸ

Ա.

Չարարախտ գուսանը, թառը ձեռին,  
Իւր անցած կեանքի մէջ խորասուզուած  
Ջարնում էր ուժգին խօսուն լարերին,  
Ջարնում էր, երգում սրտախոր յուզուած:

Ոսկի լարերի միաբան նուազ  
Կենդանացնում էր երգչի առաջ՝  
Քանց ներկայ լուպէն՝ անցած ժամանակն,  
Իւր հնութեան անցքերը—վեշտ ու հառաչ:

Եւ նա լարերին զարնում է՛լ ուժգին,  
Ջարնում էր և իւր սև օրը լալիս.  
Բայց նրա վշտի թախծալից երգին  
Ոչ ոք կարեկիր արձագանգ տալիս:

Ինքնասէր անձին ստրուկ խառնադանձ,  
Ինչպէս քարեղէն անպզայ արձան,  
Ականջ չէր դնում երգին հիասքանչ,  
Ցաւակից լինում նրա տրտմութեան:

Նա շրջապատել վշտահար երգչին,  
Անգէտ մանուկի պէս հետաքրքիր,  
Ականջում էր լոկ նուազի հնչին,  
Իսկ ցաւին մնում էր անկարեկիր...

Բ

Եւ երգիչն երգում է ոգևորուած  
Աստուոր կեանքի անգին գոհար սէրն,  
Երկնային հրի մի բոցը վառուած,  
Որ երջանկութեամբ լցնում է սրտեր:

Երգում է նա ի՛նչ որ սուրբ է անգին,  
Ինչ վեհ է, ազնիւ, ազատ և վսեմ,  
Ինչ որ ամբառնում մարդկութեան ոգին  
Դէպ եթերային հովիտն աննսեմ:

Ինչ որ գեղեցիկ է և չքնաղեկ,  
Քանց արշալուսի հայեացքն աննման,  
Ինչ որ ներդաշնակ է և անուշեկ,  
Քան հրեշտակների համերգն օրհնութեան:

Ինչ որ խաղաղում է ջարդուած սրտեր  
Խռովալից կեանքի մեծ անապատում,

Ինչպէս բալ՝սանի ամօքիչ կաթեր,—  
 Եւ ինչ սիրելի է, և ինչ անպատում,

Ողջ երգում է նա, գուսանն ոգեշունչ,  
 Հնչում են լարերը հրաշալուր,  
 Եւ ցրւում նրա նուազի մրմունջ,  
 Անմիտ ամբոխի մէջ, որ կացել լուռ:

Երգում է երգիչը—անխօս ամբոխն  
 Առօրեայ շնչին կրքերի դերին,  
 Սառնութեան շնչով պատած անփոփոխ,  
 Գարձեալ անզգայ էր սուրբ երգերին:

Գ.

Եւ լի գառնութեամբ իմաստուն գուսանն,  
 Ածեց գարձեալ իւր գործին, և լիքը  
 Տխուր ձայներով եղաւ երգասան,  
 Հնչեց արուեստի բոլոր հրաշալիքը . . . .

Չարաբախտ գուսաններգում էր տրտում—  
 Ապշած էր ամբոխն անտարբեր կրկին—  
 Եւ երգի հնչերն հեռուն տարածւում,  
 Կորչում 'ին անհետ՝ օդերի միջին . . .

1887 յունուար 10.

Ինչպէս խրոխտապանձ գեղանի հսկան,  
 Երկայն ծայրախաչ նիզակին յինած,  
 Յաղթութեամբ հպարտ, գէտ իւր շրջական—  
 Արհամարհանքի ձգում է հայեաց,—  
 Այսպէս և բարձրից սուրբ մենաստանը  
 Երբեմն հաղիւ ակննում է ցած.  
 Նրա ոտքերի պինդ պատուանդանը  
 Լեռան հաստատուն կուրծքն է քարացած:

Գարերից հետէ կանգնած է վերեն  
 Անաստան ինչպէս իւր հիմքը հզօր,—  
 Ամեն ինչ անցնում, փոխւում է ստորեւ,  
 Իսկ նա կայ և նոյն կայ հանապազօր:  
 Նրա պարիսպները, յաղթ, բարձրաբերձ,  
 Կանգնած են այսօր ինչպէս և երէկ,  
 Գարպասը կողպած է, և նրա մերձ  
 Պահ անում պահնորդ գիշեր ու ցերեկ:

Քանց մեղուների վատապալաւոր պար,  
 Քանց միջիւնների անվերջ կարաւան,

Կամ ցնորքների շարքն ինքնահաւան,  
 Զեռում են ներքև մարդիկ անդադար,  
 Սռում են կրքեր—սէր, ատելութիւն—  
 Եւ լցնում նրանց սրտերը կրակ.  
 Բռովում է տանջանք և երջանկութիւն,  
 Եւ խինդ ու վշտեր թռչում են արագ:

Շտապում են մարդիկ տալ օգտաւէտ  
 Հարկ

Մարմնասէր կեանքի ունայն ժամերին,  
 Եւ հնչել իրենց նուազը դատարկ  
 Դէպ կուսաստանի անդորրը վերին:  
 Բայց այնտեղ, ինչպէս խուլ անապատում,  
 Հանդարտ է կրկին,—տաղտկալի ձայներ  
 Ձեն նրա խորին հանգիստն ընդհատում—  
 Այնտեղ միակերպ լուռ է օր-դիշեր:

Այնտեղ հարաւի կոյսերը չքնադ,  
 Սրբազան ուխտին նուիրուած սրտով,  
 Ինկարոյր ցօղով ծաղկում են խաղաղ,  
 Եւ վայելութիւն ճաշակում անխռով...  
 Եւ մինչ արեգակն ոսկի է ցանում

Դէպի մեղքերից սևերես աշխարհ,  
 Անմեղ հրեշտակներ, անօթք են անում  
 Անոյշ արցունքով մեր մեղքի համար:

1888 յունուար 12

\* \* \*

Քերծի դադաթին կանգնած եմ բարձր,  
Ներքեր՝ ձորում հոսանքը վայրագ,  
Ծեծելով քարէ ափերը կարծր,  
Գարնան պերճանքով զլորւում է արագ:

Ո՛ւր ես շուտ վազում, դու լեռնային ուխտ,  
Գէպ ամենակուլ և անսիրտ ովկիան.—  
Սււնդ, քեզ նման և իմ սրտաբուխ  
Յնորքը թուաւ ինձնից յաւիտեան:

Երբ հողիս վառում էր երազաստեղծ  
Մանկութեան կրակ, եղբօրս համար  
Իմ արտասուքներս էլ, ջերմ և անկեղծ,  
Երբեմն վազում էին անդադար:

Բայց երբ որ մտայ հասարակութեան  
Սնդդայ խաւի մէջ, որտեղ կայ լրի  
Սնցօղ արտասուքը պլատոնական,  
Ուր հանգչում սրտի թրթիւր բորբոք,—

Եւ իմ արտասուքը շողիացաւ,  
Ինչպէս քո կաթին ամառուայ օրում,  
Եւ իմ բոցեղէն կրակը դարձաւ  
Սոսկ կարեկցութիւն սրտիս ծալերում...

1888 յունիս 17

Շուշի



Վ ձ Ի Ռ

[Եսուէր նորընծայ \*\*\*-ին]

Անցեալս անցաւ ինչ կայծակի շող,  
 Որ վայր մի վառուժ է երկնային ծոցը,  
 Նրա հետ ցնդեց և իմ անրջող  
 Մանկութեան ստեղծած ոսկեղէն ամբողջը...  
 Հնչեց, հս, կեանքիս սրբազան վայրկեանը,  
 Եւ ես կանգնած եմ աշխարհի դռանը:

Աշխարհ ցանկալի... ուր վայելութեան  
 Բաժակը փրփրում է շրթունքներին,  
 Եւ եռում կեանքի խնջոյք խնդութեան.  
 Աշխարհ... բայց ես չեմ լինիլ քո գերին,—  
 Ինձ համար չէ քո եռուն փոթորիկ,  
 Որի մէջ վազում են, սնտաի յոյսով,  
 Չնչին կրքերի ետեւից մարդիկ,  
 Եւ ստորե մնում աղցաւոր հոգսով:  
 Ես կ'ուզեմ բարձր, բարձր վերանալ,  
 Քան արծուի երկրէս հեռու սլանալ...

Աշխարհ... ուր ծաղկում է կոյսի հրապոյրը  
 Իւր կախարդական հրեղէն աչերում,  
 Որի դրախտային քաղցրունակ համբոյրը  
 Արբեցութեան բոյր է մարդու բերում,—  
 Ուր մոռացութեան ժամերը զուարթ  
 Սահում են սրտի առաս զեղումով,  
 Եւ փթթում ժպիտն ինչպէս քափուր վարդ  
 Քարնան երկնքի տակին անխռով:

Ժպիտը... բայց իմ սրտիցս չանցաւ  
 Երբէք անուշակ ժպտի ճառագայթ,  
 Եւ տանջուած հոգիս բնաւ չունեցաւ  
 Այդ պատրանքն անոյշ, ինձ համար անյայտ:  
 Իմ պատանութիւնս անցաւ հանդարտիկ,  
 Լի անտէր ազգի վշտերովն ամբաւ,  
 Ես ինձ մարդեցի լիբւ քաջ մարտիկ  
 Կեանքի հրապոյրքին լինել դիմադրուս:

Եւ Հիմ' որ հնչեց ըոպէն սրբազան,  
 Տենչանքը սրտիս խորքերում զաղած,  
 Չեռքս եմ առնում մի սուրբ դաւազան

Եւ աշխարհ էլնում հոգևով խաղաղած...  
 Աշխարհ... ուր պիտի արտասուք սրբեմ,  
 Եւ նրանց պիտի լինիմ մխիթար,  
 Որոնց չէ ժպտում օրհասը դժխեմ,—  
 Եւ պիտի չառնեմ օր անդամ դադար:

1888 յունիս 23

ՍԱԼՄԱՆ ԴԵՒ ԵՒ ՇՈՂԵՐ

[Հատուած... նմանողութիւն]

Եւ դե Սալմանը Շողերին  
 Մօտ է գայիս կիրքն աչքերին.  
 «Տիեզերքի մէջ աննման,  
 Չնաշխարհիկ գեղ դու միակ,  
 Աստ ինձ դու, սրտիս իշխան,  
 Սիրու մի խօսք աստ մենակ,—  
 Եւ աշխարհքի ծայրերն իսկոյն  
 Թռչեմ, ու քեզ բերեմ բոլոր»:

ՇՈՂԵՐ

Ի՞նչ սիրու խօսք ես ամեն օր  
 Ուզում—աստ՝ ինձ, ո՞վ ես դուն:

ԴԵՒ

Ո՞վ եմ ես,—եւ գիտեմ մենակ  
 Շողերն ես դու, 'ւերջանկութիւն  
 Է ինձ համար այս զիտութիւն:  
 Ո՞վ եմ ես,—հա՛ որ արեգակ

Ու լուսնակից առաջ կար միշտ.  
 Նա՛ որ բնաւ չէ տեսել վիշտ,—  
 Եւ այժմ քեզ լոկ ականեր  
 Սիրու մի խօսք քեզնեց հանել  
 է լոկ ուզում—Սիրիր ինձ դուն,  
 Եւ կը լինիմ ծառադ արթուն:  
 Ո՛վ եմ ես,—նա՛ ղյր ոտքի տակ  
 Անդուլ ճօճում է արեգակ,  
 Ում լսում են աստղ ու լուսին.  
 Կարաւաններն երկնի վարում,  
 Կարգով շրջում են միասին,—  
 Ի՛մ հրամանն են կատարում:

Ես տիեզերքն էի անցնում,—  
 Երկիրն այնտեղ մի աննշան  
 Գնտակ է,—քեզ տեսայ վրան,  
 Եւ ահա յնտեղ եմ ես ապրում:  
 Երկրաւոր գեղդ ինձ հրապուրեց,  
 Եւ ինձ երկրի հեռ պինդ կապեց.  
 Ես աշխարհքից քեզ ընտրեցի,  
 Եւ առայ քեզ, ու զրեցի  
 Վշտից հեռու այս դիւթական

Ետանաւէտ զրգարանում,  
 Ուր որ ամբաւ քնքշանք լոկ կան,  
 'Լ երջանկուլթիւն անմահական...  
 Ինձ հեռ լինել չե՞ս կամենում,  
 Ասա՛, սիրում չես, հա՛, ինձ դուն:

## ՇՈՂԵՐ

Ինձ աշխարհքից է՛ր դուրս առար.  
 Որ ինձ իմ հօր անից տարար,  
 Պէտք չէ ինձ քո երջանկուլթիւն:

## Գ Ե Ի

Է՞ր աշխարհքից քեզ դուրս առայ,—  
 Որ լինիմ քեզ հըւ ծառայ:  
 Թող երկրաւոր աշխարհքն ունայն,  
 Ասա՛ ինձ դու մի խօսք միայն,—  
 Եւ տիեզերքը ծագէ՞ծագ  
 Կըպտուսեմ, և քեզ արձակ՝  
 Քան դիւթական իմ այս աշխարհը՝  
 Մի նոր աշխարհ շուտ կըձարեմ.  
 Եւ այստեղից քո ճանապարհը

Ակնթարթի մէջ կըշարեմ  
Մէջ աստղերին բուսած վարդով,  
Ու եղեմի ծաղիկներով:

Ես գիշերուայ հուր—հրեղէն  
Ոսկի մազեր աղջիկներէն  
Քան մեղրանոյշ ցօղեր կ'առնեմ,  
Իսկոյն երկինք կըսաւառնեմ,  
Եւ այնտեղից զուարթ դարնան  
Քափուր վարդի, ծաղկի վրան  
Լուսնի լուսով մարգարտաշար  
Շողուն շաղեր շաղ կըտամ վար:


Սիրու մի խօսք ասա՛ միայն  
Ինձ, սրբուհիս,—և ես երգում  
Եմ տալիս քեզ ու սուրբ խոստում,  
Որ երկնային անուշաձայն  
Սուրբ նուագները հնչեցնեմ,  
Եւ ներգաշնակ հրապոյրքով  
Քեզ օրօրեմ, ունկդ լեցնեմ:  
Եւ անթառամ դրախտի բոյրքով  
Քեզ շուրջ պատող օդն արբեցնեմ:  
Իսկ թէ այդ էլ չէ բաւական,  
Ինձ մի ակնարկ ցոյց տուր մենակ,


Որ ծիրանի խոր ծովի տակ  
Լինիմ իսկոյն ես սուղական,  
Եւ ծովային աղջիկներից  
Խնդրեմ, առնեմ քեզ համար զարդ:  
Որ կապուտակ ալիքներից  
Թռչեմ վերև, երկինք հանդարտ,  
Եւ ամպերի դշխոյն-լուսնակ  
Վար իջեցնեմ ոտքերիդ տակ:

Մի խօսք ասա, և արեւելք  
Հասնեմ իսկոյն առանց արգելք,  
Մտնեմ ոսկի արեգական  
Ապարանքներ, յափշտակեմ  
Նրա պսակը պատուական,  
Եւ մարգարտեայ շապիկն առնեմ,  
Քեզ, սրբուհիս, բերեմ նուէր:  
Արշալոյսից վառվառ գոյներ  
Խլեմ, ճտիդ կապեմ նարօտ.  
Եւ ծիածանն հօթնակամար,  
Որ փայլում է զով առաւօտ,  
Գօտի ածեմ մէջքիդ համար:

Ինձ մի՛ վառիր, իմ սիրահար,  
Մի խօսք ասա՛, սիրու խոստում,  
Որ ծափ-ծափի տան մեզ համար  
Երկինք—գետինք, անհն խնդում:  
Մի խօսք ասա, տո՛ւր ինձ քո սէր,—  
Եւ սպասուհի անթիւ աստղեր,  
Կամքիդ հըւ, անհն պտտրաստ  
Մեր հարսանքի մեծ առաջաստ...

1887





« Ազգային գրադարան



NL0241719

